ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«08» 02 2024թ.
№ 171-417569-2024

HETQ.AM-Ի ԼՐԱԳՐՈՂ ՏԻՐԱՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

ԷԼ. ՀԱՍՑԵ tirayrmuradyan@gmail.com

Ի պատասխան Ձեր 30.01.2024թ. գրության

Հարգելի պարոն Մուրադյան

«Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների միջև հարկային օրենսդրության պահպանման և այդ բնագավառում խախտումների դեմ պայքարի հարցերով համագործակցության ու փոխադարձ օգնության մասին» 1999 թվականի հունիսի 4-ի համաձայնագրի մասնակից պետությունների կառավարությունները Աստանա քաղաքում 2018 թվականի նոյեմբերի 2-ին կնքել են «Հարկային վարչարարություն իրականացնելու նպատակով ԱՊՀ մասնակից պետությունների միջև էլեկտրոնային եղանակով տեղեկություն փոխանակելու մասին» արձանագրությունը, որը Հայաստանի Հանրապետությունում վավերացվել է 2020թ. փետրվարի 12-ին:

Վերը նշված արձանագրության շրջանակներում հարկային մարմինը ստացել է տեղեկատվություն՝ ԱՊՀ անդամ պետություններում ֆիզիկական անձանց ստացված եկամուտների մասով:

Ստացված տեղեկատվության հիման վրա դուրս են բերվել ՀՀ ռեզիդենտ հանդիսացող այն ֆիզիկական անձանց վերաբերյալ տվյալները, որոնք ՀՀ օրենսդրության համաձայն ենթակա են հարկման Հայաստանի Հանրապետությունում, սակայն սահմանված ժամկետներում և կարգով հարկային մարմին չեն ներկայացրել համապատասխան հաշվետու ժամանակաշրջանների հաշվարկները, չեն հաշվարկել և չեն վճարել հարկերը:

Հարկային մարմնի կողմից ծանուցվել են թվով 1005 ֆիզիկական անձինք, որոնց մասով եկամտային հարկի գումարը կազմում է 187,8 մլն. դրամ, այդ թվում՝ ըստ տարիների ծանուցվել են՝

2020 թվականի ընթացքում ստացված եկամուտների մասով՝ 122 ֆիզիկական անձ, որոնց առաջադրված հարկի գումարը կազմել է շուրջ 21,3 մլն. դրամ,

2021 թվականի ընթացքում ստացված եկամուտների մասով՝ 96 ֆիզիկական անձ, որոնց առաջադրված հարկի գումարը կազմել է շուրջ 13,2 մլն. դրամ,

2022թ. թվականի ընթացքում ստացված եկամուտների մասով՝ 787 ֆիզիկական անձ, որոնց առաջադրված հարկի գումարը կազմել է շուրջ 153,3 մլն. դրամ:

2/8/2024

X

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: GEVORGYAN EDGAR 4010690054 ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատարող՝
Երրորդ անձանցից ստացված
տեղեկատվության վերլուծության բաժնի
գլխավոր հարկային տեսուչ Շահանե Կարապետյան
Հեռ. 010304055 (4062)